Դաւիթ էլաւ, պառուու անթարուց[1]), ինչ թոնիր կ'խառնին, առից, ընկաւ մաչ տաշտին, կանչից Աստուած, կինաց դեախ Կուզբադնը ասքար. կինաց, ասքարին խասաւ. խասաւ, ձեռ էտու մէկ սպնդրի ծառ ըմ քեշից, իրիք տիր իտու պալանդարկ[2]), իրիք խարիր ասքար կուտրից[3])· մնաց Կուզբադին զինք մընակ։ Խասաւ, Կուզբադին էլ բռնից։

Էսաց.—Իս քիւ ժամու բեախտ, ընձը չ'սպանիս։

Որ չ'սպանից, էլաւ Կուզբադնու ատամքիր քեշից, փնչից[4]) ճակատ*)։

Կուզբադին էլաւ, կինաց Մսրայ քեաղքի քեամակ։

Էնդեխէն Մսրայ խարտնիր, կնքտիր էկան ջիւրու, իրիշկիցին, տեսան՝ Կուզբադին կ'կեայ էն եանէն. կնքտիր կանչիցին, ասին.

«Կուզբադին ... աբերան**),
Ի՞նչ իս իկի լերան լերան.
Տիւ կ'ասիր՝ կ'երթամ Սասմայ քեաղաք,
Քեառասուն աղջիկ բիրիմ արմաղան,
Քեառասուն կոլոտ կնիկ բիրիմ՝ էրկանք աղան,

---

[1]) Անթարոց—թոնիր խառնելու փայտը։ [2]) Փայտ շպրտել։ [3]) Սպանեց։ [4]) Մեխեց, խրեց։

*) Դաւիթ նորից նորոգում է վանքը։

**) Ա. վարիանտում Կուզբադին Սասուն է հասնում, Սասման կանայք հարցնում են.

«Կուզբադին, լերան լերան,
Մուրուս բռնիմ, ցէթիմ բերան,
Էդ ո՞ւր կ'երթաս էդենց շորերան»։

Կուզբադին էսաց.

«...էք ձեր մէծ ու պստկի բերան,
Տ'երթամ Սասուն, քեառասուն աղջիկ բռնիմ արմաղան», և այլն։

Կնանիք ի՞նչ ասցին.

—Հէ՛յ Կուզբադին, տիւ գնա, ընկի՛ շէկ տղի ձեռ, աղէկ կ'բիրիս թալան։